

ԹՈՌՆԻԿՆԵՐՈՒՍ

Ճրոտողեցէ՛ք ի՛մ թռոնիկներ
Թռչուններու պէս անտառին,
Վազվըգեցէ՛ք շրնիկներու
Նըման անհոգ. զըւարճացէ՛ք
Ըսկիւռներու պէս խաղամոլ,
Քանի չունիք դուք վիշտ ու ցաւ,
Սրտի վերքեր եւ հոգեկան
Բա՛րդ կարիքներ:
Նըմանեցէ՛ք դաշտերու մէջ
Նորարողորջ ծաղիկներուն՝
Քանի ուշ չէ:
Զի պիտի գայ օրն ա՛նպայման,
Երբ կեանքն անգութ ու ծարւրացած,
Դառնութիւններ, եւ նորանոր
Վիշտ ու ցաւեր ձեզ պիտի տայ:
Սէր մը անյոյս, անգութ մահեր,
Երբ ըսկըսին ձեզ խոցոտել.
Երբ կորսուի հնիւրնուի
Առօրեային՝ ձեր սի՛րտն անքիծ,
Հիւանդութիւն եւ այլ հարցեր
Զեզ գգետնեն:
Ճրոտողեցէ՛ք: Եւ վեր ուրախ
Ճիչերով գէթ՝ թող թարմանայ
Խոնջած հոգիս. ի՞նչ փոյթ թէ արդ
Զէ՛ք կրնար դո՛ւք
Խոցուած մարմի՛նն իմ նորոգել:

ԱՆԵԼ